

Հավելված՝
«Հայաստանի Հանրապետության
փաստաբանական դպրոց» հիմնադրամի
կառավարման խորհրդի՝ 13.11.2014
թվականի թիվ 10/2-Լ որոշման

Խորհրդի նախագահ՝ Արա Չոհրաբյան

**«ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ
ՏԵՄԱՆԿԱՐԱՀԱՆՈՒՄ ԵՎ ՏԵՄԱԶԱՅՆԱԳՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳ**

ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Հայաստանի Հանրապետության փաստաբանական դպրոց» հիմնադրամի (այսուհետև՝ **ՀՀ փաստաբանական դպրոց**) վարչական տարածքում տեսանկարահանում և տեսաձայնագրում իրականացնելու սույն կարգը (այսուհետև՝ **Կարգ**) սահմանում է ՀՀ փաստաբանական դպրոցի վարչական տարածքում տեսանկարահանումներ և տեսաձայնագրություններ իրականացնելու ընթացակարգը, ՀՀ փաստաբանական դպրոցի աշխատակազմի, դասախոսների, փաստաբանների, ունկնդիրների և ՀՀ փաստաբանական դպրոցի տարածք մուտք գործած այլ անձանց իրավունքները, սահմանափակումները, պարտականությունները, արգելքները, գաղտնիությանը և պատասխանատվությանը վերաբերող ընթացակարգերը:
2. ՀՀ փաստաբանական դպրոցի տարածքում կատարված տեսանկարահանումը և (կամ) տեսաձայնագրությունը, անկախ դրանց բովանդակությունից, համարվում են ՀՀ փաստաբանական դպրոցի սեփականությունը՝ բացառությամբ հեղինակային իրավունքի օբյեկտների:
3. Կարգը պարտադիր է ՀՀ փաստաբանական դպրոցի աշխատակազմի, դասախոսների, տեխնիկական աշխատողների, փաստաբանների, ունկնդիրների և ՀՀ փաստաբանական դպրոցի տարածք մուտք գործած այլ անձանց համար:
4. ՀՀ փաստաբանական դպրոցի վարչական տարածքում տեսանկարահանում և (կամ) տեսաձայնագրություն կատարվում է քննությունների (ստուգարքների) ընթացքը և

ուսումնական գործընթացը վերահսկելու, անվտանգության ապահովման համար:

5. Կարգում տեղ գտած ներքոհիշյալ հասկացություններն ունեն հետևյալ իմաստը (նշանակությունը).
- 1) **ՀՀ փաստաբանական դպրոցի վարչական տարածք՝** ՀՀ փաստաբանական դպրոցին սեփականության, վարձակալության կամ այլ գույքային իրավունքով հանձնված տարածքը,
- 2) **մասնավոր տարածք՝** հանգստի սենյակ, զուգարան, լողասենյակ, կողպվող մասնավոր պահարաններ, հանդերձարաններ,
- 3) **ադմինիստրատոր (վարչավար)՝** տեղեկատվական տեխնոլոգիաների մասնագետ:

II. ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԵՎ ԱՅԼ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՍԱՀՄԱՆԱՓՎՈՒՄՆԵՐԸ

6. ՀՀ փաստաբանական դպրոցի վարչական տարածքում կատարված նկարահանման նյութերը հասանելի են ՀՀ փաստաբանական դպրոցի տնօրենին, տեղակալներին, անվտանգության աշխատողին կամ ՀՀ փաստաբանական դպրոցի տնօրենի թույլտվությամբ այլ անձին:
7. ՀՀ փաստաբանական դպրոցը, ելնելով անվտանգության և այլ նկատառումներից, կարող է գրանցել և պահպանել տեսանկարահանման և (կամ) տեսաձայնագրման նյութերը, այդ թվում՝
 - 1) լսարաններում դասախոսության և ընդմիջման ժամերին, ինչպես նաև միջանցքներում,
 - 2) ՀՀ փաստաբանական դպրոցի տարածք մուտք գործելու վայրերը:
8. ՀՀ փաստաբանական դպրոցը երաշխավորում է տեսանկարահանման և (կամ) տեսաձայնագրման նյութերի պահպանման անվտանգությունը:

III. ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՐԳԵԼՔՆԵՐ

9. Տեսանկարահանման և (կամ) տեսաձայնագրման տեխնիկական միջոցները պետք է համապատասխանեն պաշտպանվածության բարձր որակին:
10. ՀՀ փաստաբանական դպրոցը պարտավոր է անվտանգության աշխատակցին և ադմինիստրատորին ծանոթացնել Կարգին:
11. Տեսանկարահանման և (կամ) տեսաձայնագրման նյութերը կարող են պահպանվել նաև կոշտ սկավառակի վրա:
12. Բոլոր այն վայրերում, որտեղ տեղադրված են տեսանկարահանման և (կամ) տեսաձայնագրման սարքեր, ՀՀ փաստաբանական դպրոցը պարտավոր է տեղադրել համապատասխան նախազգուշացնող նշան:
13. Տեսանկարահանման նյութերը կարող են օգտագործվել որպես ապացույց ՀՀ

փաստաբանական դպրոցի աշխատակազմի, դասախոսների, ունկնդիրների և այլ անձանց նկատմամբ կարգապահական (այդ թվում՝ աշխատանքային) վարույթ, ինչպես նաև քաղաքացիական, քրեական և վարչական վարույթ իրականացնելիս:

14. Կարգով նախատեսված նպատակներից բացի՝ այլ նպատակով տեսանկարահանման և (կամ) տեսաձայնագրության նյութերի օգտագործումն արգելվում է:
15. Արգելվում է տեսանկարահանում և (կամ) տեսաձայնագրություն կատարել մասնավոր համարվող տարածքներում:
16. Անորակ կամ անհայտ արտադրության տեսանկարահանման և (կամ) տեսաձայնագրման տեխնիկական միջոցների օգտագործումն արգելվում է:

IV. ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ

17. ՀՀ փաստաբանական դպրոցը պետք է հարգի անձանց մասնավոր կյանքի իրավունքը և ապահովի տեսանկարահանման և (կամ) տեսաձայնագրման գաղտնիությունը՝ բացառությամբ կարգի 13-րդ կետով սահմանված դեպքի:

V. ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ

18. Կարգն ուժի մեջ է մտնում ՀՀ փաստաբանական դպրոցի կառավարման խորհրդի կողմից հաստատվելու օրվան հաջորդող օրվանից և գործում է անժամկետ:
19. Կարգում փոփոխություններ և (կամ) լրացումներ կարող են կատարվել միայն ՀՀ փաստաբանական դպրոցի կառավարման խորհրդի կողմից:
20. Կարգի հետ կապված մեկնաբանությունները (պարզաբանումները) տրվում են ՀՀ փաստաբանական դպրոցի կառավարման խորհրդի կողմից՝ վերջինիս նախաձեռնությամբ կամ շահագրգիռ անձի դիմումի (բողոքի) հիման վրա: